REPUBLIC OF ARMENIA
KOTAYK REGION MAYAKOVSKI VILLAGE

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
КОТАЙКСКИЙ РЕГИОН СЕЛО МАЯКОВСКИЙ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

հեռ. 0222 6 05 22
E-mail mayakovski-1@mail.ru

N 114
11 հունիսի 2013թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Շահգալդյան

« Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 8-րդ կետի պահանջի համաձայն , Ձեզ է ներկայացվում Մայակովսկի համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 5-ի հերթական նիստի որոշումները :

Առդիր. 5 թերթ :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

.Կատ. Մայակովսկի համայնքի աշխ. քարտուղար
Վ. Փայտյան
6-05-22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » հունիսի 2013 թվական N 27-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

Հաստատել համայնքի ավագանու 2013 թվականի հունիսի 5-ի հերթական նիստի

օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N 68-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 66-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
3. Հողամասի նպատակային նշանակության փոփոխման մասին

Կողմ (7)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2013թ.հունիսի 5
Գ. Մայակովսկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » հունիսի 2013 թվական N 28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 68-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի , « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի պահանջներով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Մայակովսկի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 24-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի 2013 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 68-Ն որոշման հավելվածում կատարել փոփոխությունը.

Ապարատի 01 բաժնի 1.1 խմբի « Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» 4251 հոդվածից 100 000 / հարյուր հազար/ դրամ.

08 բաժնի 2.7 խմբի «Հուշարձանների վերականգնում և պահպանում» 4251 « Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածից 150 000 / հարյուր հիսուն հազար/ դրամ.

08 բաժնի 4.3 խմբի 4251 « Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածից 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

ընդհամենը 450 000 / չորս հարյուր հիսուն հազար դրամ տեղափոխել՝
07 բաժնի 6.2 խումբ «Առողջապահություն » 4251 « Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածին :

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » հունիսի 2013 թվական N 29-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 66-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի « Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 66-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ (7)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
ԱՋԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2013թ.հունիսի 5
Գ. Մայակովսկի

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ
Մայակովսկի համայնքի ավագանու
2013թվականի հունիսի 5-ի N 29-Ա որոշման
Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ
Մայակովսկի համայնքի ավագանու
2012թվականի դեկտեմբերի 12-ի N 66-Ա որոշման

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 14
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

Հ/հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԻ ՔԱՆԱԿԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀ դրամ /	Ընդամենը /ՀՀ դրամ /
	Քաղաքական պաշտոն			
1	Համայնքի ղեկավար	1	205 000	205 000
	Հայեցողական պաշտոն			
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	115 000	115 000
	Համայնքային ծառայողներ			
1	Աշխատակազմի քարտուղար	1	160 000	160 000
2	Առաջատար մասնագետ	2	150 000	300 000
3	1-ին կարգի մասնագետ	1	125 000	125 000
4	2-րդ կարգի մասնագետ	4	65 000	260 000
	Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ			
1	Գյուղապետարանի պահակ	1	90 000	90 000
2	Ծառայողական մեքենայի վարորդ	1	125 000	125 000
3	Գյուղապետարանի հավաքարար	1	65 000	65 000
4	Գերեզմանատան աշխատող	1	60 000	60 000
	Ընդամենը	14		1 505 000

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Փայտյան

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 0222 6 05 22 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » հունիսի 2013 թվական N 30-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի պահանջը,և Հայաստանի Հանրապետության հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 13-ի թիվ 38 դրական եզրակացությունը՝ ***համայնքի ավագանին որոշում է.***

1. Քաղաքացի Կարեն Հարությունյանի սեփականությունը հանդիսացող Մայակովսկի գյուղի 07-043-128-003 կադաստրային համարի 4400 քառակուսի մետր գյուղատնտեսական նշանակության վարելահողից '1000 քառակուսի մետր մակերեսով, փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի կատեգորիա՝ զովացուցիչ ըմպելիքների արտադրամաս կառուցելու համար :
2. Առաջարկել քաղաքացի Կարեն Հարությունյանին , հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը եռամսյա ժամկետում մուծելու համայնքի բյուջե:
3. Համայնքի ղեկավարին'
1) իրականացնել հսկողություն սույն որոշման երկրորդ կետի նկատմամբ,
2) սույն որոշման առաջին կետում նշված հողամասը երեք տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործվելու դեպքում' սահմանված կարգով ներկայացնել սույն որոշումն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման նախագիծ:
4. Աշխատակազմի քարտուղարին' հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության նախարարություն և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

Կողմ (7)	**Դեմ (0)**	**Ձեռնպահ (0)**
ԱԶԱՏՅԱՆ ԼԵՌՆԻԿ		
ԱԹՈՅԱՆ ԻՐԻՆԱ		
ԱՍԱՏՐՅԱՆ ՍԱՀԱԿ		
ԲԱՐՍԵՂՅԱՆ ԱՇՈՏ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ		
ՄԱՆՈՒԿՅԱՆ ԷԴԻԿ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ